Աշոտ հինգերրորդ՝ որդի Աբասայ՝ որ Ողորմածն կոչեցաւ և Շահի-Արմէն, իշխեաց ամս ԻԵ: Սա հաստատեաց զԿաթուղիկոսն յընդհանուրս, վանեալ զՎահան և զՍտեփաննոս Կաթուղիկոսունս, որ զմիջոց աշխարհս լցեալ էին նզովիւք: Թագուհին սորա շինեաց զՀաղբատ և զՍանահին զհռչակաւոր վանորայսն 'ի թվին Գ․Ռ՛Ժ․:

Սմբատ չորրորդ՝ որդի Աշոտոյ՝ որ Շահն-Շահի-Արմէն կոչեցաւ, իշխեաց ամս Ժ․Գ․: Նա 'ի Թագաւորելն վերարկեաց պարսպի Անւոյ քաղաքին՝ բարձրաբերձ բուրգունս լայնատարած աղխիւք յԱխուրեան գետոյն մինչև 'ի Ծաղկաձորն կոչեցեալ վայրք: Նա հիմնարկեաց զպայծառ Կաթուղիկէն: Բայց մահ հասեալ նմա, ոչ կարաց կատարել զնա. զոր Թագուհին նորա Կատարանիդէ աւարտեաց զնոյն: